

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2016Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 253900 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137900-ը քաղաքաբնակներ են (54.3%), 116000-ը՝ գյուղաբնակներ (45.7%):

2016թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1628 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 67-ով պակաս, մահացածների թիվը նվազել է 148-ով՝ կազմելով 1117: Բնական աճը կազմել է 511 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասել է 36-ով՝ կազմելով 717, ամուսնալուծությունների թիվը նվազել է 47-ով՝ կազմելով 127:

2016թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 51.2 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք:

2016թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 31.3 մլրդ. դրամ: Աճ է արձանագրվել սննդամթերքի (9.6%) և պատրաստի մետաղե արտադրատեսակների (2.4 անգամ) արտադրություններում: Հաշվետու ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ գրանցվել է աճ՝ 1.2 մլրդ. դրամի չափով կամ արտադրվել է 18.2 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա: Հանքագործական արդյունաբերության ոլորտում նույնպես աճ է գրանցվել. արտադրության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 460.5 մլն. դրամի չափով կամ արտադրվել է 1.2 մլրդ. դրամի արտադրանք:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 51.8 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 51.5 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 0.6 %:

2016թ. հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 42.4 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 9.4 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 6.6 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 2.7 մլրդ. դրամի արտադրանք: 2016թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.7 %-ով:

մլն. դրամ

	2015թ. I կիսամյակ	2016 թ. I կիսամյակ	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	51922.0	51243.5	-678.5	98.7
Արտադրանքի իրացման ծավալը	51524.6	51817.0	292.4	100.6
Արտահանման ծավալը, որից՝	9129.3	9374.6	245.3	102.7
ԱՊՀ երկրներ	7052.5	6622.4	-430.1	93.9
այլ երկրներ	2076.8	2752.2	675.4	132.5

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2016թ. առաջին կիսամյակում կազմել է 28.4 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 36.5 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 49.2 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 25.1 մլրդ. դրամի դիմաց կամ գրանցվել է 96.0 % աճ:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 3.1 հազ. տոննա միս, ինչը 5.4%-ով ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 2.6%-ով կամ արտադրվել է 39.7 հազ. տոննա կաթ, ձվի արտադրության ծավալը հասել է 75.0 մլն. հատի, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 4.8%-ով: